



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 124

14 օգոստոսի 2013 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ N 1 ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻՑ ԴԵՊՒ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ» ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 300ՄՄ ՏՐԱՄԱԳԾՈՎ 280 ԳԾԱՄԵՏՐ ԵՐԿԱԹՅԱ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32 հոդվածի 17 կետով և հիմք ընդունելով Մարալիկ համայնքի ավագանու 25 հուլիսի 2012 թվականի թիվ 35-Ն որոշումը, Մարալիկի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի 14 օգոստոսի 2013 թվականի թիվ 5^ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարալիկ քաղաքի թիվ 1 գերեզմանոցից դեպի «Կարմիր վանք» կոչվող հատվածում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 300մմ տրամագծով 280 գծամետր վերգետնյա երկաթյա խողովակների աճուրդային եղանակով 1680000 /մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հազար/ դրամ արժեքով վաճառքում հաղթող ճանաչել Հարություն Սիրակի Ճարոյանին և ճանաչել նրա սեփականության իրավունքը:

2. Հարություն Սիրակի Ճարոյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ